



**Diocese of the Armenian Church  
of America**

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

★ MURRAY HILL 6-0710

Bishop Torkom Manoogian, Primate

Թիւ 20324  
Մարտ 5, 1868

Արժանաշնորհ  
Տ. Գրիգոր ՔՇՆՅ. Հայրապետեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Թարութիւն Եկեղեցւոյ  
եւ Խախագահ Ծխական Խորհուրդի  
Սառւթ Միլվոքի։

Միրելի Տէր Գրիգոր,

Ատացած ենք 1968 Թունուար 21 թուակիր Զեր Մեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ Զեր Խախագահութեամբ՝ Թունուար 21ին գումարուած Զեր Ծը-  
խական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտ-  
րութիւնը, եւ Ներկայ ցնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ըն-  
տըրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ Զեր Ծխական Ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան Համաձայն, այսու կը վաւերացնենք Ծխա-  
կան Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին։

Հաճեցէք փութով Առաջնորդաբան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի  
անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներուն անունը,  
Հասցէն եւ Հեռաձայնի թիւը։

Համայնքիդ նորընտիր պատգամաւորներուն պիտի ղրկուի Թեմական Պատ-  
գամաւորական Ժողովի հրաւերը իր ժամանակին։ Բարի եղէք անոնց Հասցէները  
եւս շուտով Առաջնորդաբան ղրկել։

Օք Հնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Զեղի եւ Զեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն Համայնքիդ մեր  
սիրեցեալ Ժողովուրդին։

Միրոյ ողջունիւ

Տիարք՝ Արամ Պօյաճեան  
Սարգիս Զէնէեան  
Արքի Տատեան  
Թոնի Հաճինեան

Թորգոմ Եղիսակողոս  
Առաջնորդ